Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 21st February 2021 Bulletin 08/2021

Second Sunday of Great Lent—Expulsion

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 12:1-13:10

Ուրեմն կ'աղաչե՛մ ձեզի, եղբայրնե՛ր, Աստուծոյ կարեկցութեամբ, որ ձեր մարմինները ներկայացնէք որպէս ապրող զոհ մը՝ սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը: Եւ մի՛ համակերպիք այս աշխարհին, հապա փոխակերպուեցէ՛ք ձեր միտքին նորոգութեամբ, որպէսզի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի, հաճելի եւ կատարեալ է:

Քանի որ ինձի տրուած շնորհքով կ'ըսեմ ձեզմէ ամէն մէկուն, որ իր մասին աւելի բարձր համարում չունենայ՝ քան ինչ որ պէտք է մտածէ, հապա խոհեմութեա՛մբ մտածէ, հաւատքի չափին համեմատ՝ որ Աստուած բաշխած է իւրաքանչիւրին: Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ ունինք շատ անդամներ, եւ այդ բոլոր անդամները միեւնոյն պաշտօնը չունին, նոյնպէս մենք՝ շատ ըլլալով՝ մէ՛կ մարմին ենք Քրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ: Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն է՝ մարգարէանա՛նք հաւատքին համեմատութեամբ, եթէ սպասարկութիւն՝ սպասարկե՛նք. ա՛ն որ կը սորվեցնէ՝ թող յարատեւէ սորվեցնելով, ա՛ն որ կը յորդորէ՝ յորդորելով. ա՛ն որ կը բաշխէ՝ թող յարատեւէ պարզամտութեամբ, ա՛ն որ վերակացու է՝ փութաջանութեամբ, ա՛ն որ կ'ողորմի՝ ուրախութեամբ: Սէրը թող ըլլայ առանց կեղծիքի. չարէն զզուեցէ՛ք, բարիի՛ն յարեցէք: Իրարու հանդէպ գորովալի՛ց եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝ զիրա՛ր գերադասեցէք:

Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդո՛ւն հոգիով Տէրոջ ծառայեցէք: Յոյսո՛վ ուրախացէք. տառապանքի մէջ համբերեցէ՛ք. աղօթքի մէջ յարատեւեցէ՛ք: Սուրբերու կարիքներուն հաղորդակի՛ց եղէք. հիւրասիրութեան հետամո՛ւտ եղէք: Ձեզ հալածողները օրհնեցէ՛ք. օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք: Ուրախացողներուն հետ ուրախացէ՛ք, ու լացողներուն հետ լացէ՛ք: Իրարու հանդէպ միեւնո՛յն մտածումը ունեցէք: Բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա խոնարհեցէ՛ք դէպի նուաստները. դուք ձեզ իմաստուն մի՛ սեպէք: Չարիքի փոխարէն չարիք մի՛ հատուցանեցէք ոեւէ մէկուն. մտադրեցէ՛ք ընել ինչ որ պարկեշտ է բոլոր մարդոց առջեւ: Որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութի՛ւն պահեցէք ամէն մարդու հետ: Սիրելինե՛ր, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար, հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան. որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը ի՛մս է, ե՛ս պիտի հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը»: Ուրեմն «եթէ քու թշնամիդ անօթեցած է՝ սնուցանէ՛ զայն, ու եթէ ծարաւցած է՝ խմցո՛ւր անոր. քանի որ այսպէս ընելով՝ կրակի կայծեր պիտի կուտակես անոր գլուխին վրայ»: Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիո՛վ յաղթէ չարին:

Ամէն անձ թող հպատակի իր վրայ եղած իշխանութիւններուն. որովհետեւ չկայ իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք որ կան՝ կարգուած են Աստուծմէ: Հետեւաբար ո՛վ որ կ'ընդդիմանայ իշխանութեան, կը դիմադրէ Աստուծոյ կարգադրութեան. եւ անոնք որ կը դիմադրեն՝ իրենք զիրենք կը դատապարտեն՝: Քանի որ իշխանները՝ բարի գործերու համար վախ չեն ազդեր, հապա՝ չար գործերու: Ուստի կ'ուզե՞ս չվախնալ իշխանութենէն. բարի՛ն գործէ, եւ գովեստ պիտի ընդունիս անկէ: Որովհետեւ ան Աստուծոյ սպասարկուն է քեզի համար՝ որ բարի՛ն գործես. բայց եթէ չա՛ր գործես՝ վախցի՛ր, քանի որ զուր տեղը չէ որ սուր կը կրէ մէջքը. որովհետեւ Աստուծոյ սպասարկուն է, եւ վրէժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր վրայ՝ որ չարիք կը գործէ: Ուստի հա՛րկ է հպատակիլ. ո՛չ միայն բարկութեան համար, այլ նաեւ խղճմտանքի համար:

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Այս պատճառով է որ տուրք ալ կը վճարէք. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեաներն են՝ բուն այս բանին յատկացուած: Ուրեմն հատուցանեցէ՛ք բոլորին ինչ որ կը պարտիք. որո՛ւն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որո՛ւն որ մաքս՝ մաքսը, որո՛ւն որ վախ՝ վախը, որո՛ւն որ պատիւ՝ պատիւը: Ո՛չ մէկ պարտք ունեցէք ոեւէ մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ ո՛վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ՚ըլլայ Օրէնքը: Արդարեւ այն ըսուածը. «Ծնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, մի՛ ցանկար», եւ եթէ կայ ուրիշ որեւէ պատուիրան՝ համառօտաբար կը բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝ պէս»: Սէրը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը:

The Epistle of St Paul to the Romans 12:1-13:10

I beseech you therefore, brethren, by the mercies of God, that ye present your bodies a living sacrifice, holy, acceptable unto God, which is your reasonable service. And be not conformed to this world: but be ye transformed by the renewing of your mind, that ye may prove what is that good, and acceptable, and perfect, will of God. For I say, through the grace given unto me, to every man that is among you, not to think of himself more highly than he ought to think; but to think soberly, according as God hath dealt to every man the measure of faith. For as we have many members in one body, and all members have not the same office: So we, being many, are one body in Christ, and every one members one of another. Having then gifts differing according to the grace that is given to us, whether prophecy, let us prophesy according to the proportion of faith; Or ministry, let us wait on our ministering: or he that teacheth, on teaching; Or he that exhorteth, on exhortation: he that giveth, let him do it with simplicity; he that ruleth, with diligence; he that sheweth mercy, with cheerfulness. Let love be without dissimulation. Abhor that which is evil; cleave to that which is good. Be kindly affectioned one to another with brotherly love; in honour preferring one another; Not slothful in business; fervent in spirit; serving the Lord; Rejoicing in hope; patient in tribulation; continuing instant in prayer; Distributing to the necessity of saints; given to hospitality. Bless them which persecute you: bless, and curse not. Rejoice with them that do rejoice, and weep with them that weep. Be of the same mind one toward another. Mind not high things, but condescend to men of low estate. Be not wise in your own conceits. Recompense to no man evil for evil. Provide things honest in the sight of all men. If it be possible, as much as lieth in you, live peaceably with all men. Dearly beloved, avenge not yourselves, but rather give place unto wrath: for it is written, Vengeance is mine; I will repay, saith the Lord. Therefore if thine enemy hunger, feed him; if he thirst, give him drink: for in so doing thou shalt heap coals of fire on his head. Be not overcome of evil, but overcome evil with good.

Let every soul be subject unto the higher powers. For there is no power but of God: the powers that be are ordained of God. Whosoever therefore resisted the power, resisted the ordinance of God: and they that resist shall receive to themselves damnation. For rulers are not a terror to good works, but to the evil. Wilt thou then not be afraid of the power? do that which is good, and thou shalt have praise of the same:

For he is the minister of God to thee for good. But if thou do that which is evil, be afraid; for he bearish not the sword in vain: for he is the minister of God, a revenger to execute wrath upon him that doeth evil. Wherefore ye must needs be subject, not only for wrath, but also for conscience sake. For for this cause pay ye tribute also: for they are God's ministers, attending continually upon this very thing.
Render therefore to all their dues: tribute to whom tribute is due; custom to whom custom; fear to whom fear; honour to whom honour. Owe no man any thing, but to love one another: for he that loveth another hath fulfilled the law. For this, Thou shalt not commit adultery, Thou shalt not kill, Thou shalt not steal, Thou shalt not bear false witness, Thou shalt not covet; and if there be any other commandment, it is briefly comprehended in this saying, namely, Thou shalt love thy neighbour as thyself. Love worketh no ill to his neighbour: therefore love is the fulfilling of the law.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5: 17-48

«Մի՛ կարծէք թէ եկայ՝ աւրելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ո՛չ թէ աւրելու, հապա՝ գործադրելու: Որովհետեւ ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքէն յոտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կատարուին”: Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պատուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ:

Որովհետեւ կը յայտարարեմ ձեզի. “Եթէ ձեր արդարութիւնը չգերազանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը”»:

«Լսեր էք թէ ըսուեցաւ նախնիքներուն. “Մի՛ սպաններ”: Ո՛վ որ սպաննէ, արժանի պիտի ըլլայ դատաստանի: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ զուր տեղը բարկանայ իր եղբօր դէմ՝ արժանի պիտի ըլլայ դատաստանի:

Ո՛վ որ "ապուշ" ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ ատեանի դատապարտութեան: Ո՛վ որ "յիմար" ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ գեհենի կրակին”: Ուրեմն եթէ քու ընծադ զոհասեղանին վրայ բերես, ու հոն յիշես թէ եղբայրդ բա՛ն մը ունի քեզի դէմ, հո՛ն ձգէ ընծադ՝ զոհասեղանին առջեւ. նա՛խ գնա՝ հաշտուէ՛ եղբօրդ հետ, եւ ա՛յն ատեն եկուր՝ որ մատուցանես ընծադ: Շուտո՛վ համաձայնէ քու ոսոխիդ հետ, մինչ ճամբան ես անոր հետ, որպէսզի հակառակորդդ չյանձնէ քեզ դատաւորին, ու դատաւորը՝ ոստիկանին, եւ բանտը չնետուիս: Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ քեզի. “Բնա՛ւ դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին նաքարակիտը”»:

«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Շնութիւն մի՛ ըներ”: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր ցանկալու համար, արդէ՛ն անիկա իր սիրտին մէջ շնութիւն ըրած է անոր հետ”: Ուստի եթէ աջ աչքդ կը գայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, բայց ամբողջ մարմինդ չնետուի գեհենը: Եթէ աջ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ, կտրէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, ու ամբողջ մարմինդ չնետուի գեհենը»:

«Նաեւ ըսուեցաւ. “Ո՛վ որ արձակէ իր կինը, թող տայ անոր ամուսնալուծումի վկայագիր մը”: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կ’արձակէ իր կինը՝ առանց պոռնկութեան պատճառի, ի՛նք շնութիւն ընել կու տայ անոր, եւ ո՛վ որ կ’ամուսնանայ արձակուածին հետ՝ շնութիւն կ’ընէ”»:

«Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն. “Սուտ երդում մի՛ ըներ, հապա հատուցանէ՛ Տէրոջ ըրած երդումներդ”: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Երբե՛ք երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որ Մեծ Թագաւորին քաղաքն է, ո՛չ ալ գլուխիդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մէ՛կ մազ ճերմկցնել կամ սեւցնել: Հապա ձեր խօսքը ըլլայ՝ այո՛ն՝ այո՛, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ Չարէն”»:

«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Աչքի տեղ՝ աչք, եւ ակռայի տեղ՝ ակռայ”: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Չարին մի՛ դիմադրեր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձո՛ւր անոր միւսն ալ: Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բաճկոնդ առնել, թո՛ղ տուր անոր հանդերձդ ալ: Եւ ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն: Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ’ուզէ փոխ առնել քեզմէ”»:

«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Սիրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ”: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք անոնց՝ որ կ’ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ, որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը ղրկէ թէ՛ արդարներուն եւ թէ անարդարներուն վրայ: Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, ի՞նչ վարձատրութիւն կ’ունենաք. մաքսաւորնե՛րն ալ նոյնը չե՞ն ըներ: Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ի՞նչ աւելի կ’ընէք ուրիշներէն. մաքսաւորնե՛րն ալ նոյնը չե՞ն ըներ: Ուրեմն դուք կատարեա՛լ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է”»:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 5:17-48

The Fulfillment of the Law

“Do not think that I have come to abolish the Law or the Prophets; I have not come to abolish them but to fulfill them. For truly I tell you, until heaven and earth disappear, not the smallest letter, not the least stroke of a pen, will by any means disappear from the Law until everything is accomplished. Therefore anyone who sets aside one of the least of these commands and teaches others accordingly will be called least in the kingdom of heaven, but whoever practices and teaches these commands will be called great in the kingdom of heaven. For I tell you that unless your righteousness surpasses that of the Pharisees and the teachers of the law, you will certainly not enter the kingdom of heaven.

Murder

“You have heard that it was said to the people long ago, ‘You shall not murder, [a] and anyone who murders will be subject to judgment.’ But I tell you that anyone who is angry with a brother or sister [b] [c] will be subject to judgment. Again, anyone who says to a brother or sister, ‘Raca,’ [d] is answerable to the court. And anyone who says, ‘You fool!’ will be in danger of the fire of hell.

“Therefore, if you are offering your gift at the altar and there remember that your brother or sister has something against you, leave your gift there in front of the altar. First go and be reconciled to them; then come and offer your gift.

“Settle matters quickly with your adversary who is taking you to court. Do it while you are still together on the way, or your adversary may hand you over to the judge, and the judge may hand you over to the officer, and you may be thrown into prison. Truly I tell you, you will not get out until you have paid the last penny.

Adultery

"You have heard that it was said, 'You shall not commit adultery.' [e] But I tell you that anyone who looks at a woman lustfully has already committed adultery with her in his heart. If your right eye causes you to stumble, gouge it out and throw it away. It is better for you to lose one part of your body than for your whole body to be thrown into hell. And if your right hand causes you to stumble, cut it off and throw it away. It is better for you to lose one part of your body than for your whole body to go into hell.

Divorce

"It has been said, 'Anyone who divorces his wife must give her a certificate of divorce.' [f] But I tell you that anyone who divorces his wife, except for sexual immorality, makes her the victim of adultery, and anyone who marries a divorced woman commits adultery.

Oaths

"Again, you have heard that it was said to the people long ago, 'Do not break your oath, but fulfill to the Lord the vows you have made.' But I tell you, do not swear an oath at all: either by heaven, for it is God's throne; or by the earth, for it is his footstool; or by Jerusalem, for it is the city of the Great King. And do not swear by your head, for you cannot make even one hair white or black. All you need to say is simply 'Yes' or 'No'; anything beyond this comes from the evil one. [g]

Eye for Eye

"You have heard that it was said, 'Eye for eye, and tooth for tooth.' [h] But I tell you, do not resist an evil person. If anyone slaps you on the right cheek, turn to them the other cheek also. And if anyone wants to sue you and take your shirt, hand over your coat as well. If anyone forces you to go one mile, go with them two miles. Give to the one who asks you, and do not turn away from the one who wants to borrow from you.

Love for Enemies

"You have heard that it was said, 'Love your neighbor [i] and hate your enemy.' But I tell you, love your enemies and pray for those who persecute you, that you may be children of your Father in heaven. He causes his sun to rise on the evil and the good, and sends rain on the righteous and the unrighteous. If you love those who love you, what reward will you get? Are not even the tax collectors doing that? And if you greet only your own people, what are you doing more than others? Do not even pagans do that? Be perfect, therefore, as your heavenly Father is perfect.

Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրոդ կիրակին կոչվում է նաև Արտաքսման: Օրվա խորհրդի և անվան մասին Աստվածաշունչ մատյանի Ծննդոց Գրքում գրված է. «…Եվ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից և ստեղծվել էր»: (Ծննդ. 3:23): Նախապատմությունը հետևյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբեբայական խոսքերին, պատվիրանազանց գտնվելով՝ համտեսեց արգելված պտղից: Որպես պատիժ, մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից և անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը և կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա և վերջում էլ ասվեց նրան. «...հող էիր և հող կդառնաս» (Ծննդ.3.19):

Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել և այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, զղջում, ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու ևս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար:

Sunday of Expulsion

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: "So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed" (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn't die at once, but was deprived of the eternity granted by God and was cursed Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in end God said to the human being: "You were made from soil and you will become soil again" (Genesis 3:19).

The church Fathers have given the Sundays of the Period of great lent such names and mysteries which symbolize the mankind's way of life – birth, sinning, regret and repentance. This should serve for the human being as an occasion for thinking of himself/herself and his/her lifer so that the period of great Lent should be fruitful and productive.

ՊԱՀՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ՄԵԾ ՊԱՀՔԻ ՇՐՋԱՆԸ

Եկեղեցական տոնացույցի համաձայն տարին բաժանվում է տոնական և պահոց օրերի: **Պահոց 158 օրերի** մեծ մասը կարճատև պահքեր են՝ օրապահքեր (չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մատնության և չարչարանքների) և շաբաթապահքեր, իսկ առավել ժողովրդականություն վայելող և ամենաերկարատև պահքը Մեծ կամ Քառասնորդական պահքն է, որն այս տարի (2021թ) սկսվում է փետրվարի 15-ից և, ներառելով նաև Ավագ Շաբաթը, կտևի մինչև Ապրիլի 4-ը՝ Ս. Զատիկ:

Պահքն օգտակար է նաև բժշկական տեսակետից, հատկապես Մեծի պահոց շրջանում, քանի որ զարնանամուտն առանց ճարպային, կենդանական սննդի անցկացնելը դրական ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Սակայն սխալ է այն մտայնությունը, թե պահքը սոսկ դիետա է՝ նիհարելու կամ որոշակի հիվանդություններից ձերբազատվելու համար: Պահքը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով. այն առաջին հերթին հոգեկան ու բարոյական ամեն տեսակի ախտերից ու մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղջմամբ ու ապաշխարությամբ աստվածահաճո և առաքինի կյանքին դառնալը: Պահոց շրջանում կարևոր է հոգևոր շնորհների ու հատկապես եղբայրասիրության մեջ զորանալը, քանի որ, ինչպես Եզնիկ Կողբացին է ասում. «**Մեկը կարող է կենդանու միս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միսը ծամել**»: Այս պարագային կարևոր է նաև մեկ այլ ծայրահեղությունից զգուշանալը. պահք պահելը չպետք է պատճառ դառնա պահեցողության մեջ տկարացող եղբայրակցին դատելու.«**Ով ուտում է, թող չարհամարհի նրան, ով չի ուտում, իսկ ով չի ուտում, թող չդատի նրան, ով ուտում է**» (Հռոմ.14:3):

Պահքի կարևորությունն առավել հարազատորեն ըմբռնելու համար պիտի ընդգծենք այն հանգամանքը, որ այն օրինադրվել է դեռևս դրախտում, և Աստծու կողմից մարդուն տրված առաջին պատվիրանը եղել է հենց պահք պահելը. «**Դրախտում ամէն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի կերեք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկահացու կդառնաք**» (Ծնն.2:16-17):

Ի տարբերություն այլ եկեղեցիների, որոնք պարզապես թվակարգում են Մեծ պահքի 7 կիրակիները, Հայաստանյայց Եկեղեցին սուրբգրային հիմք ունեցող յուրահատուկ անուններով ու խորհուրդներով է օժտել դրանք, որով նրանք կազմել են խորհրդանշական մի շղթա՝ արտացոլելով մարդու դրախտային կյանքի, պատվիրանազանցության ու անկման, աստվածորոնողության և աստվածային նախախնամությամբ փրկագործության ողջ ընթացքը:

Պահքերի (բացառությամբ օրապահքեր) նախորդ օրերը կոչվում են «**բարեկենդան**», իսկ Մեծ Պահքին նախորդում է Բուն Բարեկենդանը: Բարի կենդանություն, այսինքն՝ բարի, անհոգ և երջանիկ կյանք. այս իմաստն է ամփոփված «**բարեկենդան**» անվան մեջ, որ առավելագույնս արտահայտված ենք տեսնում Բուն Բարեկենդանի խորհրդում, որը Մեծ Պահքի առաջին կիրակին է և պատկերում է մարդու դրախտային երանավետ կյանքը: Այս խորհուրդը երևում է անգամ սննդի օգտագործման մեջ, քանի որ Բուն Բարեկենդանը կենդանական և ճոխ ուտելիքներ գործածելու վերջին օրն է: Մեծ պահքի երկրորդ կիրակին կոչվում է Արտաքսման և խորհրդանշում է մարդու՝ դրախտից արտաքսվելը և Աստծո տեսությունից զրկվելը: Հենց դա է խորհրդանշում ողջ Մեծ Պահքի շրջանում եկեղեցիների վարագույրների փակ մնալը և Ս. Հաղորդությունից հավատացյալների անմասն մնալը: Երրորդ կիրակին կոչվում է Անառակի և մատնանշում է առ Աստված դառնալու և կորուսյալ դրախտը գտնելու կարեվորագույն նախապայմանը՝ ապաշխարանքը: Չորրորդ՝ Տնտեսի կիրակին, ուսուցանում է նյութական հարստության տնօրինման կերպի դերը հավիտենական փրկության կամ կորստյան մեջ: Հինգերորդ՝ Դատավորի կիրակին, պատգամում է հարատև աղոթքի անփոխարինելի նշանակությունը փրկության համար: Վերջին՝ Գալստյան կիրակին, ամփոփում է Քրիստոսի ինչպես Առաջին Գալստյան խորհուրդը, այնպես էլ Երկրորդ գալստյան խոստումը:

Մեծ Պահքին անմիջապես հաջորդող շաբաթը կոչվում է Ավագ Շաբաթ և ընդգրկում է Փրկչի երկրային կյանքի վերջին կարևորագույն իրողությունները՝ հաղթական մուտքը Երուսաղեմ (Ծաղկազարդ), Վերջին Ընթրիքը, Մատնությունը, Չարչարանքները, Խաչելությունը, Մահը, Թաղումը և ի վերջո՝ հրաշափառ Հարությունը՝ Ս.Զատիկը:

Հեղինակ՝ Գարիկ սարկավագ Ասրյան (2017թ.)

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ողորմութեամբ Աստծոյ, որ պատրաստէ՛ք ձեր մարմինները որպէս զոհ կենդանի, սուրբ, աստուածահաճոյ. այդ է ձեր բանական պաշտամունքը» **(Հռոմ. 12:1):**

Մեծ Պահքի ճամբով դէպի Յարութիւն քայլող սիրելինե՛ր,

Յաճախ է քառասնորդական Մեծ Պահքի նախօրինակ մատնանշւում Տէր Յիսուս Քրիստոսի անապատի փորձութիւնը: Իսկ ինչո՞ւ մկրտութիւնից յետոյ Սուրբ Հոգին առաջնորդեց Քրիստոսին անապատ՝ սատանայից փորձուելու: Պատասխանը ծաւալուն է, բայց պահեցողութեան այս շրջանում մեզ ակամայ առաջին հերթին յիշելի է լինում այն պահը, երբ փորձիչը քաղցը հագեցնելու իր առաջարկն արեց Փրկչին: Յետաքրքիր են այն զուգահեռները, որով մեկնիչ հայրերը համեմատում են Ադամի պարտուելը կերակրի փորձութեանը եւ երկրորդ Ադամի՝ Քրիստոսի յաղթելը փորձութեանը եւ այն մատուցողին: Քրիստոս իր ամէն քայլով ու խօսքով, ամէն բանով բուժեց Ադամին եւ մարդկութեանը հասցուած բոլոր վերքերը, որ փորձչի կողմից տրուել էր: «Ադամ» մարդ է նշանակում, որ ամբողջ մարդկութեան խորհրդանիշն է, եւ Ադամի հետ մենք էլ իւրովի մեղքի մասնակից եւ ժառանգ ենք: Նոյն տրամաբանութեամբ Քրիստոս համամարդկային փրկութիւն բերեց՝ յաղթելով սատանային եւ նրա ամենամեծ զէնք մահուանը:

Արտաքսման կիրակի անուանումն իրենով արդեն խոկում է դրախտից մարդու արտաքսվելու եւ վերադարձի ցանկութեան մասին: Սբ. Բարսեղը այս ոգով է կոչ անում. ***«Քանի որ պահք չպահելով վռնդվեցինք դրախտից, այդ պատճառով էլ պահեցողություն անենք, որ նորից դրախտ մտնենք»***: Մենք դրախտի ճամբորդներ ենք եւ դրա համար խաչի վրայ Քրիստոսին հաւատացող աւազակն օրինակ եղաւ դրախտ վերադարձի: Իր օրինակով էլ յստակ երեւում է, որ Փրկչին հաւատացողը, ապաւինողն է դրախտին արժանանում:

Ժողովական կանոնները յստակ սահմանում են, որ բոլոր առողջ եւ չափահաս քրիստոնեաները պէտք է քառասնորդական Պահքով ապաշխարութեան շրջան ունենան: Այո, պահեցողութիւնն ապաշխարութեան կարեւոր, բայց ոչ միակ կերպն է, քանի որ առանց աղօթքի եւ բարի գործի, առանց հոգու եւ սրտի ապրումի այն կարող է դատարկ մնալ: Այսօրուայ ընթերցումի մէջ Պօղոս առաքեալը մեզ մատնանշում է կարեւոր եւ նուրբ մի հանգամանք, որ հաճելի է Աստծուն: Նա կոչ է անում, անգամ աղաչում է մեր մարմինները պատրաստել իբրեւ ***«զոհ կենդանի, սուրբ, աստուածահաճոյ. այդ է ձեր բանական պաշտամունքը»:*** Պաշտամունքը, ըստ սբ. Բարսեղ Մեծի, լարուած, հարատեւ եւ անշեղ ուշադրութիւնն է Նրա նկատմամբ, Ում ծառայում ես: Մարդ Աստծուն պաշտում է խօսքով, մարմնով, գործով, կեանքով: «**Բանական պաշտամունք**» ձեւակերպումը մեզ անմիջապէս մտովի կապում է բանի, բանաւոր խօսքի հետ՝ պատկերացումն ուղղելով դէպի աղօթական պաշտամունք: Սակայն այս ակնարկը **«բանաւոր պաշտամունք»** կոչում է մեր ամբողջական վիճակով Աստծուն մօտենալուն, Աստծոյ սրբութեանը համարժէք մարմնապէս սուրբ վիճակով ապրելուն: ***«Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմինների մէջ»***,- այլ տեղում կոչ է անում առաքեալը (Ա Կորնթ. 6:20): Պօղոսը, իբրեւ հայր եւ առաջնորդ, կարող էր հրահանգել եւ պատուիրել, բայց աղաչանքով է դիմում, այն էլ այն ոչ թէ իր, այլ հաւատացեալների օգուտի համար: Առաքեալը **«կենդանի զոհ»** է կոչում այս տեսակ զոհողութիւնը, որպէսզի չշփոթուի հեթանոսական արիւնալի զոհաբերութեան գաղափարի հետ, իսկ **«սուրբ, աստուածահաճոյ»** նկարագրութեամբ զատում է նաեւ զոհի հրէական ընկալումից, որ Աստծուց մերժուեց շատ առիթներով (տե՛ս Ես. 1.12, Սաղմ. 49:23; 68:31-32):

Բայց ինչպէ՞ս մարմինը կարող է զոհ դիտուել: Գեղեցիկ բացատրութիւն ունի Սբ. Յովհան Ոսկեբերանը. ***«Երբ աչքը չի նայում աղտեղի հայեացքով, արդեն զոհաբերութիւն է, երբ լեզուն չի խօսում ամօթալի բաներ, արդեն ընծայում է, երբ ձեռքը անօրէն արարք չի գործում, արդեն ողջակեզ է: Ճիշտն ասած՝ դա էլ բաւարար չէ. մենք պիտի բարին գործենք: Ձեռքը թող բարեգործութիւն անի, շուրթերն օրհնեն վիրավորողներին, լսելիքը թող մշտապէս վարժուի Աստծոյ խօսքը լսելու մէջ..»***: Ըստ նրա՝ մեր զոհաբերութիւնը ոչ թէ հրէականի պէս անշունչ է, այլ կենդանի եւ ապրող: Այս դէպքում կրակը ներսից է: Եթէ հին զոհաբերութիւնների ժամանակ կրակը այրում-սպանում էր, այս դեպքում առաւել կենդանացնում է, քանի որ կեանք տուող Սուրբ Հոգու ջերմութիւնն է բորբոքում:

Սուրբ Գիրքը դեռ վաղուց այս տեսակ յիշատակութիւն անում է եւ Աստծուն իրապէս հաճելի տեսակը՝ կամաւոր ջանքով սրտի մաքրութիւնն ու խոնարհութիւնը մատնանշելով. ***«Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ»*** (Սաղմ. 50.19), «***Այժմ, այս ժամանակներում չկայ… ո՛չ ողջակեզ, ո՛չ զոհ, ո՛չ զոհաբերութիւն, ո՛չ խունկ եւ ո՛չ էլ քեզ երախայրիք մատուցելու տեղ՝ ողորմութիւն գտնելու համար: Այլ կոտրուած սրտով եւ տառապած հոգով թող ընդունելի լինենք»*** (Դան. 3:38-39):

Կարեւոր է նկատել, որ իբրեւ բնաբան յիշուած խօսքում առաքեալը յորդորում է ոչ թէ մարմինը նիւթական իմաստով զոհաբերել, այլ պատրաստել իբրեւ զոհ, սպանել ոչ թէ մարմինը, այլ կրքերը, հոգեւոր աղտեղութիւնները: Այն նպատակ ունի մարմինը սրբութեան պատրաստելու, մաքուր կերպով ներկայացնելու եւ ընծայելու. ***«Իսկ նրանք, որ քրիստոսեաններ են, խաչն են հանում իրենց մարմինները՝ կրքերով եւ ցանկութիւններով հանդերձ»*** (Գաղ. 5:24):

Ի՞նչ է ***բանաւոր պաշտամունքը***, եթէ ոչ՝ հոգեւոր պաշտամունք, կեանք Քրիստոսի մէջ: Այս պատուերը կատարած ենք լինում, երբ ամէն օր ողջախոհ ապրումով ենք լինում՝ լի ողորմութեամբ, խոնարհութեամբ եւ անչարութեամբ:

Արտաքսման կիրակիի խոկումն առաջնորդում է մեզ մեր ականջի տակ շշնջացող օձին մերժելու եւ մեզ խաչով փրկագնած Քրիստոսին յանձնուելու՝ այլեւս մեղքին չվերադառնալու կամքով. «***Այսուհետեւ մեղքը թող չթագաւորի ձեր մահկանացու մարմիններին՝ հնազանդեցնելու ձեզ իր ցանկութիւններին: Եւ ձեր մարմնի անդամները, որպէս անիրաւութեան գործիք, ի ծառայութիւն մեղքի մի՛ պատրաստէք, այլ յանձնեցէ՛ք ձեզ՝ ի ծառայութիւն Աստծու, որպէս մեռելներից կենդանի դարձածներ, իսկ ձեր մարմնի անդամները՝ արդարութեան գործիքներ՝ ի ծառայութիւն Աստծու»*** (Հռոմ. 6:12-13):

Վանական Հայրերից մէկը կարճ սահմանում է Մեծ Պահքի զոյգման ոգին այս նմանությամբ. ***«Սուրբ Հոգին մեզ սովորեցնում է փախչել մեղքից եւ այլեւս չընկնել նրա մէջ. դա՛ է ապաշխարութիւնը»*** (Սբ. Աբբա Եսայի): Անշուշտ, դժուար այս ճանապարհը, ուր Աստծոյ Սուրբ Հոգու շնորհը օգնում է, որ մեր մտքի եւ սրտի պատերազմները Քրիստոսին մեր մէջ ունենալով յաղթենք:

Աստուած օրհնի եւ զօրացնի բոլորիս Մեծ Պահքի այս հոգենորոգ շրջանի ամէն օրը. ***«Եւ խաղաղութեան Աստուածն ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապէս, եւ ձեր ամբողջ հոգին, շունչը եւ մարմինը թող անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստը»*** (Ա. Թեսաղ. 5:23):

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

ԱՂՈԹՔՆԵՐ

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ.

Աղաչում եմ, Տե՛ր Հիսուս, և ընկնում Քո սուրբ Խաչի առջև. նրա բարեխոսությամբ ընդունիր աղաչանքներս, կատարիր խնդրվածքներս և նրանով զորացրու ինձ իմ կոչման մեջ, որի համար կանչվեցի, ու Քո պատվիրաններում, որոնք սովորեցի: Տուր ինձ նրանով զորություն և ժուժկալություն, զգաստություն, առողջություն և պահպանություն իմ անձին օր ու գիշեր և ամեն ժամ՝ ննջելիս ու արթնանալիս, ընթանալիս և կանգ առնելիս, գործերում ու տքնություններում, աղոթքի և պահքի մեջ, նաև՝ Քո կամքը կատարելիս:

Այն թող ամուր բերդ լինի ինձ և հզոր աշտարակ՝ թշնամու առաջ: Զարդարիր ինձ սրանով՝ իբրև հոգեղեն զարդով և իմանալի լույսով:

Եվ Գաբրիելի ահեղ բարբառի օրը՝ սուրբ Խաչդ երևալիս, լուսավորիր խավարած հոգիս՝ լույսով բարձրանալու անմահ Փեսայիդ ընդառաջ՝ խառնվելու հայրապետների երամներին, մարտիրոսների դասերին և հրեշտակների գնդերին:

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

Աղոթք պահպանության համար

Մարդասեր Տեր Աստված, մարդասեր Հոր Որդի, Դու ես քեզ հուսացողների պահապանն ու օգնականը, քո ողորմությամբ պահիր քո ծառային անփորձանք եւ անսայթաք պահպանիր նրան երեւելի եւ աներեւույթ թշնամու որոգայթներից: Պահպանիր քո ծառային չար աչքից ու չար լեզվից, սրից եւ երեւացող ու աներեւույթ բոլոր հարվածներից: Ամէն:

Ամենախնամ Տէր, քո սուրբ երկիւղը պահապան դիր իմ աչքերին՝ չնայելու արատաւոր բաների. Եւ իմ ականջներին՝ չար խօսքերը հաճոյքով չլսելու. Եւ իմ բերանին՝ սուտ չխօսելու. Եւ իմ սրտին՝ չարութիւն չխորհելու. Եւ իմ ձեռքերին՝ անիրաւութիւն չգործելու. Եւ իմ ոտքերին՝ ապօրինի ճանապարհ չգնալու. Այլ ուղղիր նրանց շարժումները միշտ լինելու քո պատուիրանների համաձայն. Եւ ողորմիր քո արարածներին եւ ինձ՝ բազմամեղիս:

Սուրբ Ներսես Շնորհալի

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԻ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔԸ

Տեր Աստված իմ, Հզոր և Գթած, ամբողջ սրտով շնորհակալություն եմ հայտնում Քեզ, ամեն բանի համար, որ տվեցիր ինձ ծննդյանս օրից մինչև այսօր: Շնորհի՛ր, որ միշտ խոնարհ լինեմ, բարի ու մաքուր՝ խորհուրդներով, խոսքով և գործով: Թող արդար և բարեմիտ լինեմ ընկերներիս հանդեպ, հնազանդ ծնողներիս, քաղցր ու սիրալիր բոլոր մարդկանց հանդեպ: Անեմ այն, ինչ որ պիտի ուզեմ, որ ուրիշները ինձ անեն: Հեռու պահիր ինձ ծուլությունից և անգործությունից: Փրկի՛ր ինձ չար ընկերներից, չար օրինակներից և փորձություններից: Քու առատ սիրո մեջ ընդունի՛ր և հիշի՛ր ինձ ու ընտանիքիս: Քեզ փառք հավիտյանս: Ամեն:

Գրառում՝ **Տ. Հովսեփ Ա.Քահանա Հակոբյան**

4: Հոգեհանգիստ - Memorial Service

No Memorial Service for this Sunday

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.